ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<15>> հուլիսի 2026թ. N ՄՈ/436 -Ա

ք. Արմավիր

«ՄԵԾԱՄՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՍՊԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գասպար Եղիազարյանի 2026 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գասպար Եղիազարյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործած մասը՝ 15 աշխատանքային օր տևողությամբ, 2026-2027 թվականների աշխատանքային տարվա ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:

2. Գասպար Եղիազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Աննա Թորոսյանին:
3. «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Աննա Թորոսյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գասպար Եղիազարյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 290284017 9 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**